ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ

JEL: Y30

Խորհրդային տնտեսագիտական մտքի բառապաշարում բացակայում էր «ազգային տնտեսություն» հասկացությունը: Նախկին խորհրդային բոլոր հանրապետությունների տնտեսությունները համարվում էին խորհրդային տնտեսության մաս, աշխատանքի ոչ այնքան ռացիոնալ բաժանման մի որոշակի օղակ, որում հաճախ հաշվի չէին առնվում ազգային տնտեսության առանձնահատկությունները՝ կապված տեղական նյութական ու հոգևոր արտադրությունների ու ծառայությունների համալիր օգտագործման հետ: Անկախ նշվածից՝ հանրապետությունում ձևավորվել էր տնտեսության որոշակի կառուցվածք, որը գործում էր միութենական կապերի համակարգում: Խորհրդային կարգի փլուզումը հանգեցրեց տնտեսական կապերի, հետևապես նաև տնտեսական կառուցվածքի խարխլման: Նախորդ կապերի մեքենայական շարունակությունը շատ կարճ տևեց: Բնականաբար, հանրապետության նոր կացությունը ծայր տվեց նոր մտորումների՝ թե ինչպիսի՞ն է լինելու ազգային տնտեսության ապագան, ի՞նչ կառուցվածք է ունենալու: Ակադեմիկոս Մ. Քոթանյանի կարծիքով՝ որոնումը պետք է ենթակա լինի տարբեր իրադրություններում գործող տնտեսության ստեղծմանը, այսինքն՝ ազգի տնտեսական հարաբերական անկախությունն ու գոյատևությունն ապահովող խնդիրները լուծող տնտեսության ստեղծմանը[1]: Սակայն նոր տնտեսական կառուցվածքի ձևավորումը կապված է բնական, մարդկային, աշխարհագրական դիրքի, մշակութային, ֆինանսական հնարավորությունների, իրականացվող քաղաքականության և շատ այլ միակցություն ենթադրող բազմաթիվ խճողումների հետ, ինչը, ինչպես նկատում են Ա. Մարկոսյանը, Է. Մաթևոսյանը և Մ. Մարկոսյանը, համայնավարական տնտեսակարգից շուկայական տնտեսավարմանն անցման ժամանակ «ուղեկցվել է բարդություններով և շարունակում է մնալ բարդ, դժվարին, անորոշություններով և սպառնալիքներով ուղեկցվող»[*]: Ըստ այդմ՝ երևույթները հարկ է գնահատել անցյալի հետ տրամաբանական կապակցության մեջ: Իսկ իրողությունն այն է, որ տնտեսության համայնավարական ձևից շուկայականին անցումը կատարվեց կտրուկ սահ-

---

[1] Տե՛ս **Քոթանյան Մ.,** Շուկայական էկոնոմիկա, Եր., 1998, էջ 124-131:

[*] **Մարկոսյան Ա., Մաթևոսյան Է., Մարկոսյան Մ.,** Տնտեսության կառուցվածքը և դրա տնտեսական արդյունավետության գնահատումը (ՀՀ օրինակով), Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Գիտական հոդվածների ժողովածու-2024, №2, Եր., ՀՀ ԳԱԱ ՏԻ, 2024, էջ 34, https://DOI:10.54503/1829-4324.2024.2-34

մաններ գծելու եղանակով. երկիրը հայտնվեց «կապիտալիստական համարվող երկրների ցանկում», որտեղ կառավարությունը մեկուսացվեց որևէ կարգավորիչ միջամտության գործառույթից՝ գնագոյացման գործընթացները թողնելով պահանջարկի ու առաջակի տարերային գործողությանը: Բնականաբար, էական նշանակություն ունեցող մի խնդիր է առաջանում՝ տնտեսական այնպիսի կառուցվածքի ստեղծումը, որը կարող է ապահովել բարձր արդյունավետություն տարածաշրջանի և համաշխարհային շուկայում ինտեգրման կապերի, այսինքն՝ մրցունակ տնտեսության մեջ: Այստեղ է, որ «տնտեսության կառուցվածք» հասկացությունն ի հայտ է բերում չափելիության մի կարևոր մեթոդաբանական մոտեցում՝ արժեստեղծման առումով ինչ է ցուցադրում ՀՆԱ կազմում գործունեության տարբեր տեսակների ու ոլորտների մասնակցությունը: Գոյություն ունի տնտեսության կառուցվածքի հատվածավորում առաջնային, երկրորդային և երրորդային դասակարգմամբ, որն ավելի տեսանելի է դարձնում յուրաքանչյուր հատվածի մասնակցությունը և հեշտացնում է «տնտեսական քաղաքականության տարբերակների մշակումը»: Հեղինակները ոչ պատահականորեն անդրադառնում են տնտեսական գործունեության տեսակների արևմտյան և ՀՀ վիճակագրական կոմիտեի դասակարգումների տարբերություններին: Անդրադարձն արդեն որոշակի տարակուսանք է ենթադրում, թե ինչ տրամաբանական նախադրյալների վրա է կառուցված այդ տարբերությունը, որքանով է «համակարգի «ճիշտ» կամ «սխալ» հետագծի և, առավել ևս, դրա հետագա զարգացման կամ հեռանկարի հարցը մեծապես կախված այն հարցի պատասխանից, թե այդ համակարգը ինչպես է բավարարում և ապահովում տվյալ երկրի առջև կանգնած սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծումը: Այլ կերպ ասած՝ այդ տնտեսությունն ինչպես է ծառայում պետության և հասարակության մեծ մասի շահերին և, վերջին հաշվով, ինչպես է ապահովում բնակչության կենսամակարդակի բարձրացումը, կյանքի որակի բարելավումը և ազգային անվտանգությունը[2], կամ ավելի ստույգ՝ ինչ ունենք, ինչքանով է ելնում իրական ու հեռահար պահանջներից:

Տնտեսության կառուցվածքի առաջնային, երկրորդային և երրորդային հատվածների համամասնությունները, այսպես ասած, տրված մեծություններ չեն: Ժամանակի ընթացքում դրանք կարող են ենթարկվել փոփոխության, ինչպես օրինակ դա տեղի ունեցավ XX դարի երկրորդ կեսից սկսած, որը դրսևորվեց տեխնիկական առաջընթացի վրա անմիջականորեն ազդող ճյուղերի ու արտադրությունների արագացված զարգացման, գիտատար ճյուղերի նշանակության բարձրացման, ավանդական աշխատատար ճյուղերի տեսակարար կշռի կրճատման և ծառայությունների ոլորտի արագ աճով: Ինչ խոսք, անցման շրջանում գտնվող երկրներում այդ փոփոխություններն իրենց դրսևորումները պիտի ունենային նոր տնտեսական կառուցվածքի ձևավորման պարագայում՝ խնդիրը ենթարկելով մշտադիտարկման: Ահա թե ինչու դեռևս ժամանակ առաջ Ա. Մարկոսյանը և Է. Մաթևոսյանը, անդրադառնալով շուկայական տնտեսությանն անցման առաջին երկու տասնամյակների ՀՀ տնտեսության կառուցվածքի տեղաշարժերին, ուրվագծել էին որոշակի օրինաչափություններ՝ կապված տնտեսության տարբեր ճյուղերի համամասնությունների, մասնավորապես՝ ՀՆԱ կառուցվածքում արդյունաբերության մասնաբաժնի

[2] Նույն տեղում, էջ 41:

կրճատման, շինարարության ու ծառայությունների տեսակարար կշռի ավելացման, ի հակադրություն համախառն շահույթի և համախառն եկամուտներ մասնաբաժնի աճի, վարձու աշխատողների աշխատավարձի վարձատրության մասնաբաժնի նվազման միտումների հետ[3]:

Իսկ ի՞նչ են բացահայտում 2019–2022 թթ. ժամանակահատվածում տնտեսական կառուցվածքում տեղ գտած փոփոխությունները:

Ա. Մարկոսյանը, Է. Մաթևոսյանը և Մ. Մարկոսյանը, ըստ ավելացված արժեքի արտադրության, եկամուտների ձևավորման վերաբերյալ համապատասխան վիճակագրական տվյալների վերլուծության, արձանագրում են, որ հանրապետությունում տնտեսության կառուցվածքը ընթացել է շուկայական սկզբունքներին համապատասխան: Մասնավորապես՝ թեև առաջնային հատվածի արդյունավետության ցուցանիշն ունեցել է «անկայուն» կամ փոփոխական վարքագիծ, այնուամենայնիվ, 2022-ին, 2019-ի համեմատությամբ, արձանագրվել է 0,3 տոկոսային կետով առաջընթաց, երկրորդային հատվածի բաժինը նվազել է 0,2 տոկոսային կետով, մինչդեռ շինարարության բաժինն ավելացել է 0,4 տոկոսային կետով, իսկ երրորդային հատվածն ավելացել է 1,8 տոկոսային կետով[4]: Եկամուտների ձևավորման առումով առաջատարը եղել է ծառայությունների ոլորտը:

Հեղինակները, ելնելով ՀՀ-ում վարվող վիճակագրության՝ տնտեսության ոլորտների բաժանումից, մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների ուսումնասիրությունը կատարել են ըստ տնտեսության առաջնային, երկրորդային և երրորդային հատվածների բաժանման, որը նպատակ ունի վիճակագրական մարմնին անցնելու ցուցանիշների արտացոլման սույն համակարգին, որով «առավել առարկայական և որոշակի տեսք կունենա ՀՀ տնտեսության կառուցվածքը» և «թույլ կտա կատարել միջերկրային համադրություններ»[5]: Ասվածը ենթադրում է ապավինել ընդունված չափանիշներին, որը ավելի կատարյալ ու թափանցիկ կդարձնի մակրոտնտեսական ցուցանիշների ճանաչումը:

ՌՈԲԵՐՏ ՍԱՐԻՆՅԱՆ
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

---

[3] Տե՛ս Հայաստանի Հանրապետության տնտեսության կառուցվածքը և փոփոխման միտումները, «Բանբեր Երևանի համալսարանի. Տնտեսագիտություն», Եր., 2020, № 1 (31), էջ 16-27:

[4] Տե՛ս Տնտեսության կառուցվածքը և դրա տնտեսական արդյունավետության գնահատումը (ՀՀ օրինակով), Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Գիտական հոդվածների ժողովածու-2024, № 2, Եր., ՀՀ ԳԱԱ ՏԻ, 2024, էջ 44-51:

[5] Նույն տեղում, էջ 55: